

«ԷՅ ԴԻ ԷՅ ԹԵՔ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2020թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական հաշվետվություններ	
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

## ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Էյ Դի Էյ Թեք» ՍՊԸ-ի մասնակիցներին

### Կարծիք

Մենք առդիտի ենք ենթարկել «Էյ Դի Էյ Թեք» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2020թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն ՓՄԿ-ների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

### Կարծիքի հիմք

Մենք առդիտն իրականացրել ենք առդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Առդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների առդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի (ՀԷՄՍ կանոնագիր) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան առդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլնտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերության դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



**Թաթուլ Մովսիսյան**  
Գլխավոր տնօրեն





**Էդգար Ալեքսանյան**  
Առաջադրանքի ղեկավար

03 հունիսի, 2021թ.,  
ք.Երևան, Պ.Սևակի 8

**«Էյ Դի Էյ Թեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն**  
**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**  
**2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

<i>ՕՕՕ դրամ</i>	<i>Ծանոթ.</i>	<i>31/12/20</i>	<i>31/12/19</i>
<b>Ակտիվ</b>			
Հիմնական միջոցներ	6	3,165,516	2,777,153
Ոչ նյութական ակտիվներ	7	153	171
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար		-	17,288
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>3,165,669</b>	<b>2,794,612</b>
Պաշարներ	8	1,161,621	1,769,128
Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար	9	127,195	52,464
Առևտրական դեբիտորական պարտքեր	10	1,507,346	2,098,610
Շահութահարկի գծով ընթացիկ հարկային ակտիվ		-	80,184
Այլ ընթացիկ հարկային ակտիվներ	16	-	489,403
Դրամական միջոցներ	11	1,305,969	156,654
Ֆինանսական ակտիվներ	19	65,000	65,000
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>4,167,132</b>	<b>4,711,443</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>7,332,801</b>	<b>7,506,055</b>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
Կանոնադրական կապիտալ	12	50	50
Զբաղիված շահույթ	12	4,985,561	3,178,650
Պահուստային կապիտալ	12	8	-
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>4,985,619</b>	<b>3,178,700</b>
Հետաձգված հարկային պարտավորություններ	20	29,509	16,931
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>29,509</b>	<b>16,931</b>
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	13	10,843	8,877
Կանխավճարներ աշխատանքների, ապրանքների համար	14	2,149,186	4,177,927
Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ	15	6,178	18,331
Շահութահարկի գծով ընթացիկ հարկային պարտավորություն		1,177	-
Աշխատավարձի և այլ կարճ.հատուց-ի գծով պարտ-ություններ	16	150,289	105,289
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>2,317,674</b>	<b>4,310,424</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>7,332,801</b>	<b>7,506,055</b>

Տնօրեն  
 Գլխավոր հաշվապահ



Ռաֆիկ Ղազարյան  
 Արման Մարտիրոսյան

*«Էյ Դի Էյ Թեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն  
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար*

<i>Միլիոն դրամ</i>	<i>Ծանոթ.</i>	<i>2020</i>	<i>2019</i>
Հասույթ	17	9,272,845	4,116,284
Վաճառքի ինքնարժեք	17	(6,891,572)	(3,664,252)
<b><i>Համախառն շահույթ</i></b>		<b>2,381,273</b>	<b>452,032</b>
Այլ եկամուտներ	18	67,903	63,009
Իրացման ծախսեր		(1,360)	-
Վարչական ծախսեր		(216,502)	(161,364)
Ղեկավարական պարտքերի արժեզրկումից կորուստներ	10	(263)	-
Այլ ծախսեր	18	(35,727)	(31,467)
<b><i>Գործառնական շահույթ</i></b>		<b>2,195,324</b>	<b>322,210</b>
Ֆինանսական եկամուտներ	19	17,578	9,315
Ֆինանսական ծախսեր	19	-	(8,714)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		(375)	1,740
<b><i>Շահույթ մինչև հարկումը</i></b>		<b>2,212,527</b>	<b>324,551</b>
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	20	(405,608)	(67,583)
<b><i>Զուտ շահույթ</i></b>		<b>1,806,919</b>	<b>256,968</b>

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Ռաֆիկ Ղազարյան

Արման Մարտիրոսյան

*«Էյ Դի Էյ Թեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն  
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար*

Միլիոն դրամ

	Ծանոթ.	Կանոնա- դրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Պահուստ ային կապիտալ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	12	50	2,921,682	-	2,921,732
Զուտ շահույթ			- 256,968	-	256,968
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.		50	3,178,650	-	3,178,700
Զուտ շահույթ			- 1,806,919	-	1,806,919
Ավելացում/պակասեցում			(8)	8	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.		50	4,985,561	8	4,985,619

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Ռաֆիկ Ղազարյան

Արման Մարտիրոսյան



**«Էյ Դի Էյ Թեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն  
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

<i>ՄՈՈ ղրամ</i>	<i>Ծանոթ.</i>	<i>2020</i>	<i>2019</i>
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</b>			
արտադրանքի, ապրանքների, ծառայությունների վաճառքից		9,800,209	8,310,215
այլ ներհոսքեր		16,358	70,917
կյութերի, ապրանքների, ծառայությունների ձեռք բերումից		(4,970,237)	(3,636,575)
աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումից		(2,001,892)	(1,394,447)
շահութահարկի վճարումից		(55,000)	(125,000)
այլ հարկերի, պարտադիր վճարների վճարումից		(1,044,482)	(596,563)
այլ արտահոսքեր		(117,024)	(146,400)
<b>Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր</b>		<b>1,627,932</b>	<b>2,482,147</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>			
հիմնական միջոցների վաճառքից		29,146	-
տոկոսների ստացումից	19	17,555	13,592
հիմնական միջոցների ձեռքբերումից	7	(549,294)	(2,353,751)
ավանդների մարումից		15,000	50,000
ավանդների ներդրումից		(15,000)	(50,000)
<b>Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր</b>		<b>(502,593)</b>	<b>(2,340,159)</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</b>			
վարկերի ստացումից		-	970,425
վարկերի մարումից		-	(1,453,760)
տոկոսների վճարումից		-	(8,714)
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր</b>		<b>-</b>	<b>(492,049)</b>
<b>Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր</b>		<b>1,125,339</b>	<b>(350,061)</b>
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ		23,976	(54)
<b>Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի</b>		<b>156,654</b>	<b>506,769</b>
<b>Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի</b>		<b>1,305,969</b>	<b>156,654</b>



Տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Ռաֆիկ Ղազարյան

Արման Մարտիրոսյան

**1. Ընդհանուր տեղեկություններ**

**1.1. Նկարագիր և գործունեություն**

«ԷՅ Դի Էյ Թեք» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2010թ.:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

- շինարարություն,
- վերելակների ներմուծում, տեղադրում և առքուվաճառք:

Ընկերությունը ունի բնակելի, հասարակական և արտադրական շենքերի շինարարություն իրականացնելու իրավունք, որի համար հիմք են հանդիսանում ՀՀ քաղաքաշինության նախարարության շինարարության իրականացման 26/12/11թ. թիվ 15291 լիցենզիան:

- 01 ներդիր՝ բնակելի, հասարակական և արտադրական շինարարության իրականացում
- 04 ներդիր՝ էներգետիկ շինարարության իրականացում:

Հաշվետու տարում Ընկերությունը հիմնականում իրականացրել է բազմաբնակարան շենքերի շինարարական աշխատանքներ, որոնց խոշոր պատվիրատուն է հանդիսացել «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ՀԿ-ն:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Ծարավ Աղբյուրի 55/5, որտեղ տեղակայված է Ընկերության վարչական գրասենյակի մի մասը, իսկ հիմնական մասը գտնվում է Ծարավ Աղբյուրի 55/15 հասցեում: Ավտոտրանսպորտային ծառայությունը և կենտրոնական պահեստը գտնվում են «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ՀԿ-ից վարձակալված ք.Երևան, Ծարավ Աղբյուրի 55/8 հասցեում: Շինարարական աշխատանքները հիմնականում իրականացվել են ք.Երևան, Ծարավ Աղբյուրի 55, Պ. Սևակ 8/2 և Սոնթե Մելքոնյան 44 հասցեներում:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2020թ. 489 անձ է, իսկ 2019թ.՝ 348:

**1.2. Կորպորատիվ կառուցվածք**

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը՝ Ռաֆիկ Ղազարյանը:

<i>Մասնակիցներ</i>	<i>Բաժնեմասերի</i>	
	<i>Քանակ</i>	<i>ՀՀ դրամ</i>
Ընդամենը, այդ թվում	<b>10</b>	<b>50 000</b>
Դավիթ Ռազմիկի Հայրապետյան	8	40 000
Արմեն Աղամի Թադևոսյան	2	10 000

**2. ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ին համապատասխանությունը**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՄ) համապատասխան:

Սույն ֆինանսական հաշվետվությունները՝ Ընկերության՝ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով առաջին ֆինանսական հաշվետվություններն են: Ընկերությունը ներկայացրել է իր նախորդող ամենավերջին ֆինանսական հաշվետվությունները ամբողջական ՖՀՄՄ-ների համապատասխան:

ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ին անցնելու ամսաթիվը, այսինքն ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ի համաձայն Ընկերության վարվող հաշվապահական հաշվառման սկզբնակետը, 2019թ. հունվարի 1-ն է:

Ամբողջական ՖՀՄՄ-ներից ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ին անցման հետևանքով որևէ փոփոխություն տեղի չի ունեցել հաշվապահական հաշվառման քաղաքականությունում, Ընկերությունը կիրառել է հաշվապահական հաշվառման միևնույն քաղաքականությունը իր ֆինանսական վիճակի մասին՝ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով

սկզբնական հաշվետվության մեջ, ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով ներկայացված իր առաջին (սույն) ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում, ինչպես նաև նախորդող ամենավերջին ֆինանսական հաշվետվություններում, որոնք պատրաստվել են ամբողջական ՖՀՄՍ-ներին համապատասխան:

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին անցման վերաբերյալ ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

### 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

### 4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

#### 4.1. Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Սովորաբար սկզբնական արժեքը հիմնված է ակտիվի դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

#### 4.2. Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ:

բ) ֆինանսական արդյունքի մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Ընկերությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը:

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար:

դ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով ուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես ֆինանսավորման, ստացված տոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Ընկերությունը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

#### 4.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի յուրաքանչյուր (հիմնական) բաղկացուցիչ (առանձնացնելի միավոր), որի սկզբնական արժեքը հիմնական միջոցի ամբողջ արժեքում էական է, կամ ունի տնտեսական օգուտների սպասման նշանակալիորեն տարբեր մոդել, կամ ունի նշանակալիորեն տարբեր օգտակար ծառայություն, հաշվառվում է որպես առանձին միավոր:

Ընկերությունը հիմնական միջոցի միավորի սկզբնավորման արժեքը բաշխում է ըստ դրա հիմնական բաղադրիչների: Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները առանձնացնելուց հետո հիմնական միջոցի միավորի մնացած մասը ևս հաշվառվում է որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ (հիմնական միջոցի միավորի մնացորդային հիմնական բաղադրիչ): Որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ առանձին հաշվառվում է նաև հիմնական միջոցի միավորի անսարքությունների առկայության վերաբերյալ կանոնավոր լայնածավալ ստուգումների իրականացման ծախսումները (արժեքը), ինչպես նաև հիմնական միջոցի միավորի կանոնավոր լայնածավալ կապիտալ վերանորոգումների ծախսումները (արժեքը):

Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները հիմնական միջոցի միավորի կազմում հաշվառվում են առանձին:

Չափումը ճանաչման պահին

Հիմնական միջոցի միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, պետք է չափվի իր սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման գնի համարժեքն է: Երբ վճարումը վճարման նորմալ պայմաններով նախատեսված ժամկետից հետաձգվում է, անհապաղ վճարման գնի համարժեքի և ընդհանուր վճարումների տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային ծախս՝ հետաձգված ժամկետի ընթացքում, բացառությամբ եթե նշված տոկոսային ծախսումը կապիտալացվում է:

Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային զեղչերը և արտոնությունները հանվում են:

Չափումը ճանաչումից հետո

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Մաշվածություն

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

- ա) Ընկերության կողմից ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը,
- բ) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը,
- գ) տեխնիկական հնացածությունը,
- դ) հիմնական միջոցի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումներ:

Ընկերությունը հիմնական միջոցների խմբերի նկատմամբ կիրառում է հետևյալ օգտակար ծառայությունները.

Շենքեր	20-40 տարի
Կառուցվածքներ	20-40 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5-20 տարի
Տրանսպորտային միջոցներ	5-10 տարի
Արտադրատնտեսական գույք, գործիքներ	3-8 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	3-5 տարի
Այլ հիմնական միջոցներ	1-8 տարի

Հողամասը ունի անսահմանափակ օգտակար ծառայություն, հետևաբար դրա համար մաշվածություն չի հաշվարկվում:

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ որպես վաճառքի համար

պահվող դասակարգվելու (կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու) և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հիմնական միջոցի մաշվածության գումարը իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

*Հետագա ծախսումները*

Հիմնական միջոցի միավորին վերաբերող հետագա ծախսումներն ավելացվում են դրա հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե այդ ծախսումները բավարարում են ճանաչման չափանիշները: Մասնավորապես, հիմնական միջոցի միավորի վրա նոր մասի ավելացման, կամ հիմնական միջոցի միավորի մի մասի պարբերաբար փոխարինման ծախսումները ավելացվում է հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում է): Հիմնական միջոցների փոխարինվող մասերը ենթակա են ապաճանաչման: Ամենօրյա սպասարկման ծախսումները չեն ավելացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (չեն կապիտալացվում):

*Ապաճանաչում*

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ապաճանաչվի, երբ՝

ա) այն օտարվում է, կամ

բ) ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

**4.4. Ոչ նյութական ակտիվներ**

*Հետազոտության փուլ*

Հետազոտությունից (կամ ներքին նախագծի հետազոտության փուլից) առաջացող ոչ նյութական ակտիվները չեն ճանաչվում: Հետազոտության (կամ ներքին նախագծի հետազոտության փուլի) ծախսումները ճանաչվում են որպես ծախս՝ դրանց տեղի ունենալու պահին:

Ներստեղծված գուղվիլը չպետք է ճանաչվի որպես ակտիվ:

Ներստեղծված մակնիշները, հրապարակումների անունները, հաճախորդների ցուցակները և ըստ էության նմանատիպ միավորները չպետք է ճանաչվեն որպես ոչ նյութական ակտիվներ:

*Մշակման փուլ*

Մշակումից (կամ ծրագրի մշակման փուլից) առաջացող ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը կարող է ցուցադրել ստորև բերվածն ամբողջությամբ՝

ա) ոչ նյութական ակտիվը այնպիսի ավարտուն վիճակի հասցնելու տեխնիկական իրագործելիությունը, որ այն մատչելի լինի օգտագործման կամ վաճառքի համար,

բ) ոչ նյութական ակտիվը ավարտին հասցնելու և այն օգտագործելու կամ վաճառելու իր մտադրությունը,

գ) ոչ նյութական ակտիվը օգտագործելու կամ վաճառելու իր կարողությունը,

դ) այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվն առաջացնելու հնարավոր ապագա տնտեսական օգուտներ: Ի թիվս այլոց, Ընկերությունը պետք է ցուցադրի ոչ նյութական ակտիվի միջոցով ստեղծվող արդյունքի կամ հենց այդ ոչ նյութական ակտիվի համար շուկայի առկայությունը, կամ, եթե ակտիվը օգտագործվելու է Ընկերության ներսում, ապա ոչ նյութական ակտիվի օգտակարությունը,

ե) մշակումն ավարտին հասցնելու և ոչ նյութական ակտիվն օգտագործելու կամ վաճառելու համար անհրաժեշտ համապատասխան տեխնիկական, ֆինանսական և այլ միջոցների առկայությունը,

զ) ոչ նյութական ակտիվին մշակման ընթացքում վերագրելի ծախսումները արժանահավատորեն չափելու իր կարողությունը:

*Չափումը ճանաչման պահին*

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով:

Ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է՝

ա) դրա գնման գինը՝ ներառյալ ներկրման տուրքերն ու գնման չփոխհատուցվող հարկերը՝ առևտրային գեղջերը և արտոնությունները հանելուց հետո.

բ) ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Հետագա չափում

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները)՝ հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած կուտակված արժեզրկումից կորուստ:

Ամորտիզացիա

Ամորտիզացիան պետք է հաշվարկվի այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար՝ հետևյալ օգտակար ծառայությունից ելնելով.

- Համակարգչային ծրագիր 10 տարի
- Լիցենզիաներ Լիցենզիայի գործողության ժամկետ

Ոչ նյութական ակտիվի մնացորդային արժեքը գնահատվում է զրո, իսկ ամորտիզացիայի հաշվարկման կիրառվող մեթոդն է գծային մեթոդը:

**4.5. Ակտիվների արժեզրկում**

Սույն պարագրաֆի դրույթները վերաբերում են հիմնական միջոցներին, ոչ նյութական ակտիվներին:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատում է՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Ընկերությունը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Եթե առկա է որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվի համար: Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Ընկերությունը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է սվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր):

Արժեզրկումից կորուստ

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված գումարով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Արժեզրկումից կորստի ճանաչումից հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեգրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

Արժեզրկումից կորստի հակադարձում

Արժեզրկումից կորստի հակադարձմանը վերագրելի ակտիվի ավելացած հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան ամորտիզացիայի կամ մաշվածության), եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Ակտիվի, բացառությամբ գողվելի, գծով արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչելուց հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեգրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային

արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

#### 4.6. Պաշարներ

##### Սկզբնական չափում

Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են Հնկերությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային գեղջերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

Պաշարների վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, ինչպիսիք են աշխատուժի գծով ուղղակի ծախսումները: Այն ներառում է նաև պատրաստի արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են նյութերը պատրաստի արտադրանք դարձնելու (վերամշակելու) ընթացքում:

Հաստատուն արտադրական վերադիր ծախսումները վերամշակման ծախսումների վրա բաշխվում են՝ ելնելով արտադրական հզորությունների նորմալ մակարդակից: Յուրաքանչյուր միավոր արտադրանքի վրա բաշխվող հաստատուն արտադրական վերադիր ծախսումների գումարը չի ավելանում ցածր արտադրողականության կամ արտադրության պարապուրդի հետևանքով: Չբաշխված վերադիր ծախսումները ճանաչվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակաշրջանում: Արտադրության ծավալների անսովոր բարձր լինելու ժամանակաշրջաններում յուրաքանչյուր միավոր արտադրանքի վրա բաշխվող հաստատուն արտադրական վերադիր ծախսումների գումարը նվազեցվում է այնպես, որ պաշարները չչափվեն ինքնարժեքից բարձր:

Փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները յուրաքանչյուր միավոր արտադրանքի վրա բաշխվում են արտադրական հզորությունների փաստացի օգտագործման հիման վրա:

Պաշարների ինքնարժեքի մեջ այլ ծախսումները ներառվում են միայն այն չափով, որ չափով դրանք կատարվել են՝ պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար:

Պաշարների ինքնարժեքի մեջ չներառվող և դրանց կատարման ժամանակաշրջանում ծախս ճանաչվող ծախսումների օրինակներ են՝

ա) գերնորմատիվային ծախսումները՝ կապված նյութերի, աշխատուժի և արտադրական այլ ծախսումների գերածախսի հետ.

բ) պահպանման ծախսումները, բացառությամբ եթե դրանք անհրաժեշտ են արտադրության գործընթացում՝ նախքան հաջորդ արտադրական փուլին անցնելը.

գ) վարչական վերադիր ծախսումները, որոնք կապված չեն պաշարները ներկա գտնվելու վայր հասցնելու կամ պատշաճ վիճակի բերելու հետ.

դ) վաճառքի ծախսումները:

Երբ պաշարները ձեռք են բերվում հետաձգված մարման ժամկետով, ապա վճարման նորմալ պայմաններում ձեռքբերման գնի և վճարված գումարի տարբերությունը, ճանաչվում է որպես տոկոսային ծախս ֆինանսավորման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում:

Պաշարների ինքնարժեքում փոխառության ծախսումների՝ կապիտալացման մոտեցումները ներկայացված են համապատասխան բաժնում:

##### Ինքնարժեքի բանաձևեր

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է ԱՄԱԵ (առաջին մուտք առաջին ելք) արժեքով:

#### Հետագա չափում

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման գուտ արժեքի մակարդակ՝ ըստ տեսակների հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Պաշարների ինքնարժեքի ցանկացած իջեցման գումար՝ մինչև իրացման գուտ արժեք, և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ առաջացել է կորուստը:

Պաշարների ցանկացած իջեցման գումարի ցանկացած վերականգնման գումար, որը առաջացել է իրացման գուտ արժեքի աճից, ճանաչվում են որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ տեղի է ունեցել վերականգնումը:

Ոչ իրացվելի պաշարները դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով: Ոչ իրացվելի են այն պաշարները, որոնք չեն իրացվել կամ օգտագործվել հաշվեկշռում հաշվառելուց 12 ամսվա ընթացքում և որոնք հավանական է, որ որևէ այլ ձևով չեն օգտագործվի՝ կապված դրանց բարոյական հնացման, որակի վատացման և այլ պատճառներով:

#### **4.7. Հիմնական ֆինանսական գործիքներ**

##### Քաղաքականության ընտրություն

Հիմնական ֆինանսական գործիքների նկատմամբ Ընկերությունը կիրառում է ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ի 11-րդ և 12-րդ բաժինների պահանջներն ամբողջությամբ:

Հիմնական ֆինանսական գործիքներ են, մասնավորապես, առևտրական դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, դրամական միջոցները, տրամադրված և ստացված փոխառությունները, վարկերը:

##### Սկզբնական ճանաչում

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

##### Սկզբնական չափում

Երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, այն չափվում է գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները, բացի այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական չափման, որոնք հետագայում չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով), բացառությամբ եթե համաձայնությունն, ըստ էության, իրենից ներկայացնում է ֆինանսավորման գործարք՝ կամ գործարքի կողմ հանդիսացող կազմակերպություններից մեկի մոտ առաջացնելով ֆինանսական պարտավորություն, կամ կոնտրագենտի մոտ՝ ֆինանսական ակտիվ: Համաձայնությունը հանգեցնում է ֆինանսավորման գործարքի, եթե վճարումը հետաձգվում է ավելի, քան սովորական գործունեության համար ընդունված ժամկետները, օրինակ՝ ապրանքների իրացման նպատակով գնորդին տրամադրվում է հետաձգված անտոկոս վճարումների իրավունք (անտոկոս կրեդիտավորում) կամ ֆինանսավորվում է մի տոկոսադրույքով, որը շուկայական տոկոսադրույք չէ, օրինակ՝ աշխատողին տրամադրում է անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ: Եթե համաձայնությունը հանգեցնում է ֆինանսավորման գործարքի, ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է ապագա վճարումների ներկա արժեքով՝ զեղչված համանման պարտքային գործիքի շուկայական տոկոսադրույքով, որը որոշվել էր սկզբնական ճանաչման պահին:

##### Հետագա չափում



Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ֆինանսական գործիքները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ առանց հանելու գործառնության հետ կապված որևէ ծախսում, որը Ընկերությունը կարող է կրել վաճառքի կամ այլ օտարման դեպքում:

Որպես ընթացիկ ակտիվներ կամ ընթացիկ պարտավորություններ դասակարգված պարտքային գործիքները չափվում են դրամական միջոցների կամ այլ հատուցման չգեղջված գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի կամ կստացվի (այսինքն՝ արժեզրկումը հանած), բացառությամբ եթե համաձայնությունը հանգեցնում է ֆինանսավորման գործարքի:

Ամորտիզացված արժեք և արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստորև նշվածների գուտ գումարն է՝

- ա) գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին,
- բ) հանած հիմնական գումարի ցանկացած մարումներ,
- գ) գումարած կամ հանած սկզբնական ճանաչման գումարի և մարման գումարի միջև ցանկացած տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով,
- դ) հանած ֆինանսական ակտիվի արժեզրկման կամ անհավաքագրելիության գծով ցանկացած նվազեցում (ուղղակիորեն կամ կարգավորող հաշիվների օգտագործման միջոցով):

Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, երբ տեղին է, ավելի կարճ ժամանակաշրջանի համար, գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները ճշգրտորեն գեղջում է մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը որոշվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահի դրությամբ հաշվեկշռային արժեքի հիման վրա: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի համաձայն՝

- ա) ֆինանսական ակտիվի (պարտավորության) ամորտիզացված արժեքը ապագա դրամական մուտքերի (վճարումների) ներկա արժեքն է՝ գեղջված արդյունավետ տոկոսադրույքով.
- բ) ժամանակաշրջանի տոկոսային ծախսը (եկամուտը) հավասար է ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆինանսական պարտավորության (ակտիվի) հաշվեկշռային արժեքի և ժամանակաշրջանի արդյունավետ տոկոսադրույքի արտադրյալին:

Ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափված ֆինանսական գործիքների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը գնահատում է՝ արդյոք առկա է ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափված որևէ ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն: Եթե առկա է արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն, Ընկերությունը անմիջապես ճանաչում է արժեզրկումից կորուստ՝ շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի արժեզրկված լինելու անկողմնակալ վկայությունը ներառում է ակտիվի տիրապետողի ուշադրությանն արժանացած դիտարկելի տվյալները՝ հետևյալ կորստի դեպքերի վերաբերյալ՝

- ա) թողարկողի կամ փոխառուի նշանակալի ֆինանսական դժվարությունները.
- բ) պայմանագրի խախտումը, օրինակ՝ տոկոսների կամ հիմնական գումարի չվճարումը կամ վճարման ուշացումը.
- գ) պարտապանի ֆինանսական դժվարությունների հետ կապված՝ տնտեսական կամ իրավական պատճառներով, պարտատիրոջ կողմից պարտապանին զիջումների տրամադրումը, որը այլապես պարտատերը չէր նախատեսի.
- դ) հավանական է դարձել, որ պարտապանը կանանկանա կամ կենթարկվի այլ ֆինանսական վերակազմավորման.

ե) դիտարկելի տվյալներ, որոնք վկայում են, որ ֆինանսական ակտիվների խմբի գծով, դրանց սկզբնական ճանաչումից հետո, առկա է գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազում, թեև դեռևս հնարավոր չէ որոշակիացնել այդ նվազումը խմբի առանձին ֆինանսական ակտիվների գծով:

*Չափում*

Ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափված ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստը ակտիվի հաշվեկշռային արժեքի և ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղչված՝ գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև եղած տարբերությունն է: Եթե այդպիսի ֆինանսական գործիքն ունի փոփոխուն տոկոսադրույք, արժեզրկումից կորուստը չափելու նպատակով գեղչման դրույքը պայմանագրի համաձայն որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է:

Եթե հետագա որևէ ժամանակաշրջանում արժեզրկումից կորստի գումարը նվազում է, և նվազումը կարող է օբյեկտիվորեն կապված լինել արժեզրկումը ճանաչելուց հետո տեղի ունեցած որևէ դեպքի հետ, ապա Ընկերությունը հակադարձում է նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը կամ ուղղակիորեն, կամ կարգավորող հաշիվը ճշգրտելու միջոցով: Հակադարձումը չպետք է հանգեցնի այն բանին, որ ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը (բոլոր կարգավորող հաշիվները հանած) գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կլինեք, եթե նախկինում արժեզրկումը ճանաչված չլինեք: Հակադարձման գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

*Ֆինանսական ակտիվների ապաճանաչում*

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու պարզատրումները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Վերահսկողությունը համարվում է պահպանված, եթե մյուս կողմը գործնականում չի կարող ակտիվն ամբողջությամբ վաճառել չփոխկապակցված երրորդ կողմի՝ առանց վաճառքի վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու անհրաժեշտության:

Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

*Ֆինանսական ակտիվների դուրսգրում*

Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս են գրվում, երբ Ընկերությունը սպառել է դրանց հավաքագրելու բոլոր գործնական հնարավորությունները և եզրահանգել է, որ այդպիսի ակտիվների փոխհատուցման հետ կապված ակնկալիքները անհիմն են: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել ֆինանսական ակտիվները, չնայած այդ գումարների վերականգնման (ստացման) համար կիրառվում են հարկադրման միջոցներ, բայց ողջամիտ ակնկալիքներ չկան:

*Առևտրական դեբիտորական պարտքեր*

Հիմնական վաճառքները կատարվում են վճարման սովորական պայմանների հիմունքով, և դեբիտորական պարտքերը տոկոսակիր չեն: Երբ պարտքը հետաձգվում է վճարման սովորական պայմաններով նախատեսված ժամկետներից, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները վերլուծվում են՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ գումարները փոխհատուցելի չեն: Եթե գումարները փոխհատուցելի չեն, արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Արտարժույթով արտահայտված առևտրական դեբիտորական պարտքերը վերահաշվարկվում են դրամով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Արտարժույթի փոխարժեքային օգուտները կամ վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

*Տրված փոխառություններ*

Տրված փոխառությունները ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ են:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով տրված ժամկետային փոխառության գեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (վնասը) ճանաչվում է

- սեփական կապիտալում, եթե ֆինանսական ակտիվը մասնակիցների ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների գծով է, և
- շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական ակտիվը այլ կողմերի գծով է:

#### Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները դրամարկղում դրամական միջոցներն են և ցպահանջ ավանդները: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի: Հետևաբար, ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ՝ ձեռքբերման օրվանից երեք ամիս, կամ ավելի քիչ: Բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, կազմում են Ընկերության դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը և, որպես բաղադրիչ, դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ներառվում են դրամական միջոցներում և դրամական միջոցների համարժեքներում, իսկ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ պարտավորություններում:

#### Առևտրական կրեդիտորական պարտքեր

Սկզբնական ճանաչման պահին առևտրական կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքի, երբ կրեդիտորական պարտքը չի պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է գեղչված արժեքով:

#### Ստացված վարկեր և փոխառություններ

Ստացված վարկը և փոխառությունը սկզբնապես չափվում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով ստացված ժամկետային փոխառության գեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (օգուտը) ճանաչվում է

- որպես սեփական կապիտալի այլ տարր, եթե ֆինանսական պարտավորությունը բաժնետերերի ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների գծով է, և
- շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական պարտավորությունը այլ կողմերի գծով է:

Սկզբնական չափումից հետո ստացված վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

#### Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում

Ընկերությունը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակությունը հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

#### Հաշվանցում

Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը հաշվանցվում են, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են զուտ գումարով այն դեպքում, երբ Ընկերությունը՝

- ա) տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և
- բ) մտադիր է կամ հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

#### **4.8. Բաժնային գործիքներ**

Որպես պարտավորություն կամ սեփական կապիտալ դասակարգումը Ընկերության կողմից թողարկված պարտքային և բաժնային գործիքները դասակարգվում են կա'մ որպես ֆինանսական պարտավորություններ, կա'մ էլ որպես սեփական կապիտալ՝ պայմանագրային համաձայնության բովանդակությանը և ֆինանսական պարտավորության ու բաժնային գործիքի սահմանումներին համապատասխան:

Ընկերության կողմից թողարկված բաժնային գործիքները ճանաչվում են ստացված մուտքերի հիման վրա՝ հանած թողարկմանը ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Ընկերության սեփական բաժնային գործիքների հետգնումը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում՝ որպես վերջինիս նվազեցում: Ընկերության սեփական բաժնային գործիքների գնման, վաճառքի, թողարկման կամ մարման գծով շահույթում կամ վնասում որևէ օգուտ կամ կորուստ չի ճանաչվում:

#### **4.9. Վարձակալություն, որպես վարձատու**

##### Դասակարգում

Ընկերությունը տրված վարձակալությունը դասակարգում է որպես ֆինանսական վարձակալություն կամ որպես գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Մնացած բոլոր դեպքերում վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական:

##### Ֆինանսական վարձակալություն

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Ընկերությունը ֆինանսական վարձակալության տրված ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է ակտիվ և ներկայացնում դրանք որպես դեբիտորական պարտք՝ վարձակալությունում զուտ ներդրումների մեծությանը հավասար գումարով:

Վարձակալության զուտ ներդրման չափման մեջ ներառվող վարձավճարները ներառում են վարձակալության ժամկետի ընթացքում հիմքում ընկած ակտիվի օգտագործման իրավունքի գծով հետևյալ վճարները, որոնք չեն ստացվում մեկնարկի ամսաթվին՝

- ա) հաստատուն վճարումներ՝ հանած վարձակալության ցանկացած վճարվելիք խրախուսում,
- բ) վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են որևէ ինդեքսից կամ դրույքից և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գ) վարձատուին տրամադրված ցանկացած մնացորդային արժեքի երաշխիք, որը տրամադրվում է վարձակալի, վարձակալի հետ կապակցված կողմի կամ վարձատուի հետ չկապակցված այն երրորդ կողմի կողմից, որը ի վիճակի է կատարել այդ երաշխիքի գծով պարտականությունները,
- դ) գնման օպցիոնի իրագործման գինը, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և
- ե) վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումները, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը:

##### Գործառնական վարձակալություն

Գործառնական վարձակալության հանձնված ակտիվները Ընկերությունը արտացոլում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ըստ ակտիվի բնույթի:

Գործառնական վարձակալությունից ստացված եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Վարձակալության տրված մաշվող (ամորտիզացվող) ակտիվների մաշվածության հաշվարկման քաղաքականությունը համապատասխանում է նմանատիպ ակտիվների համար կիրառվող մաշվածության հաշվարկման քաղաքականությանը:

#### 4.10. Վարձակալություն. որպես վարձակալ

##### Սկզբնական ճանաչում

Վարձակալության ժամկետի մեկնարկի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վարձակալը ֆինանսական վարձակալության շրջանակներում իր օգտագործման իրավունքները և պարտականությունները ճանաչում է որպես ակտիվ և պարտավորություն՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է, ընդ որում՝ դրանք որոշվում են վարձակալության սկզբի դրությամբ: Վարձակալի ցանկացած սկզբնավորման ուղղակի ծախսում (լրացուցիչ ծախսումներ, որոնք ուղղակիորեն վերագրելի են վարձակալության շուրջ բանակցություններին և համաձայնության ձեռքբերմանը) ավելացվում է որպես ակտիվ ճանաչված գումարին:

Նվազագույն վարձավճարների ներկա արժեքը հաշվարկվում է՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը: Եթե այն հնարավոր չէ որոշել, ապա պետք է կիրառվի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

##### Հետագա չափում

Նվազագույն վարձավճարները բաշխվում են ֆինանսական վճարի և չվճարված պարտավորության նվազեցման միջև՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆինանսական վճարը վարձակալության ժամկետի ընթացքում բաշխվում է ըստ ժամանակաշրջանների այնպես, որպեսզի ստացվի հաստատուն պարբերական տոկոսադրույք յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ:

Պայմանական ռենտաները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք կատարվում են:

Ֆինանսական վարձակալությամբ վարձակալված ակտիվի համար հաշվարկվում է մաշվածություն (ամորտիզացիա)՝ համաձայն այդ տեսակի ակտիվի համար սահմանված քաղաքականության: Եթե խելամտորեն որոշակի չէ, որ Ընկերությունը վարձակալության ժամկետի ավարտին ձեռք է բերելու սեփականության իրավունքը, ապա ակտիվն ամբողջովին ամորտիզացվում է վարձակալության ժամկետից կամ օգտակար ծառայության ժամկետից առավել կարճի ընթացքում: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է՝ արդյոք ֆինանսական վարձակալությամբ վարձակալված ակտիվը արժեզրկվել է:

##### Գործառնական վարձակալություն

Որպես վարձակալ, Ընկերությունը գործառնական վարձակալության գծով վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչում է որպես ծախս կամ ծախսում գծային հիմունքով, եթե մեկ այլ սխտեմատիկ հիմունք ավելի լավ չի ներկայացնում ակտիվի օգտագործումից օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը:

#### 4.11. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանն մատուցել է ծառայություն, Ընկերությունը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը

- որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և
- բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՓՄԿՆ-ների ՖՀՄՍ-ով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):
- Ընկերությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝
- ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և
- բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:
- Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը ակնկալվում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

#### 4.12. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

##### Ճանաչում

Պահուստը ճանաչվում է, երբ՝

- ա) Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.
- բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. և
- գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

##### Չափում

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքը (կամ դրույքները) պետք է լինի այն դրույքը (կամ դրույքները)՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

#### 4.13. Հասույթ

##### Գործարքներ

Հասույթ առաջանում են հետևյալ գործարքներից՝

- ա) արտադրանքի, ապրանքների վաճառք.
- բ) ծառայությունների մատուցում.

զ) կառուցման պայմանագրեր, որոնցում Ընկերությունը կապալառու է.

դ) այլ անձանց կողմից Ընկերության ակտիվների օգտագործում, որը բերում է տոկոսներ, ռոյալթիներ կամ շահաբաժիններ:

#### Չափում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում Ընկերության կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները: Հասույթում չի ներառվում երրորդ անձանց անունից հավաքագրված գումարները (օրինակ՝ ԱԱՀ):

#### Հետաձգված վճարում

Երբ դրամական միջոցների (դրամական միջոցների համարժեքների) ստացումը հետաձգվում է, և համաձայնության արդյունքում գործարքը վերածվում է ֆինանսավորման գործարքի, հատուցման իրական արժեքը բոլոր ապագա ստացումների ներկա արժեքն է՝ որոշված պայմանական տոկոսադրույքի կիրառմամբ:

Պայմանական տոկոսադրույքը ստորև նշվածներից առավել հստակորեն որոշելին է՝

ա) նման վարկունակություն ունեցող թողարկողի նմանատիպ ֆինանսական գործիքի համար գերակշռող տոկոսադրույք, կամ

բ) տոկոսադրույք, որը զեղչում է ֆինանսական գործիքի անվանական գումարը՝ այն հասցնելով ապրանքների կամ ծառայությունների ընթացիկ վաճառքի գնին:

Ապագա բոլոր վճարումների ներկա արժեքի և հատուցման անվանական գումարի տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային հասույթ:

#### Ապրանքների վաճառք

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ՝

ա) Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.

բ) Ընկերությունը չի պահպանում ոչ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ոչ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն.

զ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ապրանքների (արտադրանքի) վաճառքից հասույթը ճանաչվում է, երբ ապրանքները առաքվում են և սեփականության իրավունքը փոխանցվում է:

#### Ծառայությունների մատուցում

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն.

զ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Պայմանագրի աշխատանքների ավարտվածության աստիճանը որոշվում է պայմանագրի աշխատանքների ուսումնասիրությամբ:

#### Կառուցման պայմանագրեր

Երբ կառուցման պայմանագրի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, Ընկերությունը պայմանագրի հասույթը և պայմանագրի ծախսումները, որոնք կապված են կառուցման պայմանագրի հետ, համապատասխանաբար ճանաչում է որպես հասույթ և որպես ծախս՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պայմանագրային աշխատանքների ավարտվածության աստիճանի հիման վրա (ավարտվածության տոկոսի մեթոդ): Արդյունքի արժանահավատորեն գնահատումը պահանջում է ավարտվածության աստիճանի, ապագա ծախսումների և հաշիվների հավաքագրելիության արժանահավատ գնահատումներ:

Ընկերությունը գործարքի կամ պայմանագրի ավարտվածության աստիճանը որոշելու համար կիրառում է այն մեթոդը, որն առավել արժանահավատորեն է չափում կատարված աշխատանքները: Հնարավոր մեթոդները ներառում են՝

ա) տվյալ ամսաթվի դրությամբ կատարված աշխատանքների համար կրած ծախսումների և գնահատված ընդհանուր ծախսումների միջև հարաբերակցությունը: Տվյալ ամսաթվի դրությամբ կատարված աշխատանքների համար կրած ծախսումները չեն ներառում ապագա աշխատանքներին վերաբերող ծախսումները, ինչպիսիք են ծախսումները նյութերի կամ կանխավճարների գծով:

բ) կատարված աշխատանքների ուսումնասիրությունը:

գ) ծառայությունների գործարքի կամ պայմանագրի աշխատանքների ֆիզիկական ավարտվածության աստիճանը:

Երբ կառուցման պայմանագրի արդյունքը չի կարող արժանահավատորեն գնահատվել՝

ա) հասույթ ճանաչվում է միայն պայմանագրի փաստացի կրած այն ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն, և՝

բ) պայմանագրի ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվել են:

Երբ հավանական է, որ կառուցման պայմանագրի գծով պայմանագրի ծախսումների հանգումարը կգերազանցի պայմանագրի հասույթի հանրագումարը, ակնկալվող վնասը, համապատասխան անբարենպաստ պայմանագրի պահուստի հետ միասին, ճանաչվում է որպես ծախս:

#### Տոկոս

Տոկոսները ճանաչվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

### **4.14. Ծնորհներ**

#### Ճանաչում

ա) շնորհը, որը ստացողի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են:

բ) շնորհը, որը ստացողի համար սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է:

գ) ստացված շնորհները, նախքան հասույթի ճանաչման չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես պարտավորություն:

#### Չափում

Ծնորհները չափվում են ստացված կամ ստացվելիք ակտիվի իրական արժեքով:

### **4.15. Փոխառության ծախսումներ**

#### Ճանաչում



Փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են:

#### 4.16. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

##### Ֆունկցիոնալ արժույթ

Ֆունկցիոնալ արժույթը որոշելիս Ընկերությունը հաշվի է առնում ստորև նշված գործոնները՝

ա) արժույթը՝

-որը հիմնականում ազդում է ապրանքների և ծառայությունների վաճառքի գների վրա (հաճախ այն արժույթը, որով իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները սահմանվում և հաշվարկները կատարվում են), և

-այն երկրի արժույթը, որի մրցակցային գործոններն ու կանոններն են հիմնականում որոշում իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները.

բ) արժույթ, որը հիմնականում ազդում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատուժի, նյութական և այլ ծախսումների վրա (նշվածը հաճախ այն արժույթն է, որով նման ծախսումները սահմանվում և կատարվում են):

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

##### Սկզբնական ճանաչում

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

##### Հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ տեղեկատվության ներկայացում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

##### Փոխարժեքային տարբերությունների ճանաչում

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

#### 4.17. Շահութահարկ

##### Ընթացիկ հարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

##### Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության

մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Ընկերությունը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Եկամուտ կամ ծախս ներկայացում

Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հողվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընկերությունը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հողվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Հաշվանցում

Ընկերությունը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՝

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝

I. նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝

II. տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

**4.18. Սխալներ**

Ընկերությունը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

- ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ
- բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

#### 4.19. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

- ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ
- բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

#### 4.20. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Ընկերությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝

- ա) պահանջվում է ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով, կամ
- բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ոելևանտ) տեղեկատվության ներկայացմանը:

Եթե Ընկերությունը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ՝ հետ գնալով այնքան ժամանակաշրջան, որքան քաղաքականության հետընթաց կիրառումը իրագործելի է: Հետընթաց կիրառությունը նախորդող ժամանակաշրջանի նկատմամբ իրագործելի չէ, քանի դեռ հնարավոր չէ որոշել այդ ժամանակաշրջանի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական և վերջնական մնացորդների կուտակային հետևանքը: Ճշգրտման հանրագումարը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջաններին նախորդող ժամանակաշրջաններին, վերագրվում է ամենավաղ ժամանակաշրջանում ներկայացված սեփական կապիտալի յուրաքանչյուր ազդեցություն կրած բաղադրիչի սկզբնական մնացորդին: Սովորաբար, ճշգրտումը վերագրվում է չբաշխված շահույթին: Այնուամենայնիվ, ճշգրտումը կարող է վերագրվել սեփական կապիտալի մեկ այլ բաղադրիչի:

Երբ Ընկերության համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Ընկերությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում Ընկերությունը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն առաջացող կուտակային ճշգրտման բաժինը: Հաշվապահական հաշվառման քաղաքականության

փոփոխություն թույլատրվում է, եթե նույնիսկ հնարավոր չէ այդ քաղաքականությունը առաջընթաց կիրառել ցանկացած նախորդող ժամանակաշրջանի համար:

#### 4.21. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ընկերությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Ընկերությունը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Եթե շահաբաժինները առաջադրվում կամ հայտարարվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո, Ընկերությունը չի ճանաչում այդ շահաբաժինները որպես պարտավորություն՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

#### 5. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:

*Անընդհատության հիմունք.* Ղեկավարությունը պատրաստել է սույն ֆինանսական հաշվետվությունները անընդհատության հիմունքի հիման վրա: Ղեկավարության այս դատողությունները հիմնված են Ընկերության ֆինանսական վիճակի, ընթացիկ պլանների, շահութաբերության և ֆինանսական ռեսուրսների մատչելիության, ինչպես նաև Ընկերության ապագա գործունեության նկատմամբ մակրոտնտեսական վերջին փոփոխությունների ազդեցության վերլուծության հիման վրա:

*Հասույթի ճանաչում (ծանոթ. 17).* Կառուցապատման շինարարական աշխատանքների գծով կատարման պարտականությունները կատարվում են և հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում: Կառուցապատման, վերանորոգման շինարարական աշխատանքների գծով ժամանակի ընթացքում կատարվող յուրաքանչյուր կատարման պարտականության համար ընկերությունը ճանաչում է հասույթը ժամանակի ընթացքում՝ չափելով այդ կատարման պարտականության ամբողջությամբ կատարման առաջընթացը (աստիճանը): Կատարման առաջընթացի (աստիճանի) չափման համար կիրառվում է արդյունքների (եյքային) մեթոդները, ինչպիսիք են՝ մինչև տվյալ ամսաթիվը ավարտված կատարման պարտականության ուսումնասիրությունը, ստացված արդյունքների գնահատումները, փուլերի ավարտվածությունը, անցած ժամանակահատվածը, արտադրված կամ առաքված միավորները կամ ռեսուրսների մեթոդները, ինչպիսիք են՝ սպառված ռեսուրսները, ծախսված աշխատաժամերը, կրած ծախսումները, անցած ժամանակահատվածը, օգտագործված մեքենա ժամերը:

*Օգտակար ծառայություն (ծանոթ. 6).* Շենքերի օգտակար ծառայությունը գնահատվել է՝ հաշվի առնելով ենթադրվող օգտագործելիությունը: Օգտակար ծառայության մեծ ժամկետը, ապագա գործունեության նկատմամբ մակրոտնտեսական փոփոխությունները, շուկայի փոփոխությունները կարող են ազդեցություն թողնել գնահատումների վրա:

6. Հիմնական միջոցներ

000 դրամ	Շենքեր	Մեքենա-ներ և սարքավոր- ումներ	Տրանսպոր- տային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսա- կան գույք, գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Հողամասեր	Բազմաթիվ տնկանկներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
<b>31 դեկտեմբեր 2018թ.</b>	<b>1,242,206</b>	<b>514,624</b>	<b>454,592</b>	<b>16,741</b>	<b>202,451</b>	-	-	<b>2,430,614</b>
Ձեռք բերում	23,601	340,418	381,408	5,641	423,918	-	-	1,174,986
Դուրսագրում	-	(35,407)	-	(546)	(65,651)	-	-	(101,604)
<b>31 դեկտեմբեր 2019թ.</b>	<b>1,265,807</b>	<b>819,635</b>	<b>836,000</b>	<b>21,836</b>	<b>560,718</b>	-	-	<b>3,503,996</b>
Ձեռք բերում	74,916	102,401	285,406	16,235	251,609	15	330	730,912
Դուրսագրում	-	(33,154)	-	-	-	(10)	-	(33,164)
<b>31 դեկտեմբեր 2020թ.</b>	<b>1,340,723</b>	<b>888,882</b>	<b>1,121,406</b>	<b>38,071</b>	<b>812,328</b>	<b>5</b>	<b>330</b>	<b>4,201,745</b>
Կուտակված մաշվածություն								
<b>31 դեկտեմբեր 2018թ.</b>	<b>2,336</b>	<b>354,535</b>	<b>103,593</b>	<b>7,995</b>	<b>150,415</b>	-	-	<b>618,874</b>
Տարեկան մաշվածություն	62,083	59,295	58,527	3,056	26,612	-	-	209,573
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	(35,407)	-	(546)	(65,651)	-	-	(101,604)
<b>31 դեկտեմբեր 2019թ.</b>	<b>64,419</b>	<b>378,423</b>	<b>162,120</b>	<b>10,505</b>	<b>111,376</b>	-	-	<b>726,843</b>
Տարեկան մաշվածություն	62,087	94,249	93,607	3,709	85,242	-	17	338,911
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	(29,525)	-	-	-	-	-	(29,525)
<b>31 դեկտեմբեր 2020թ.</b>	<b>126,507</b>	<b>443,146</b>	<b>255,727</b>	<b>14,214</b>	<b>196,618</b>	-	<b>17</b>	<b>1,036,229</b>
Հաշվեկշռային արժեք								
<b>31 դեկտեմբեր 2018թ.</b>	<b>1,239,870</b>	<b>160,089</b>	<b>350,999</b>	<b>8,746</b>	<b>52,036</b>	-	-	<b>1,811,740</b>
<b>31 դեկտեմբեր 2019թ.</b>	<b>1,201,388</b>	<b>441,212</b>	<b>673,880</b>	<b>11,331</b>	<b>449,342</b>	-	-	<b>2,777,153</b>
<b>31 դեկտեմբեր 2020թ.</b>	<b>1,214,217</b>	<b>445,736</b>	<b>865,680</b>	<b>23,857</b>	<b>615,708</b>	<b>5</b>	<b>313</b>	<b>3,165,516</b>

**Մաշվածություն**

<i>Մ000 դրամ</i>	<i>Ծանոթ.</i>	<i>2020</i>	<i>2019</i>
Ընդամենը, այդ թվում՝		<u>338,911</u>	<u>209,573</u>
• արտադրական նշանակության	19	333,783	205,835
• վարչական նշանակության		4,343	3,738
• գործառնական այլ նշանակության		785	-

**Գրավադրում**

Հիմնական միջոցների սեփականության իրավունքի այլ սահմանափակումներ չկան:

**Այլ**

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ եղել են:

Հիմնական միջոցների ձեռք բերման պայմանագրային հանձնառությունները կազմում են 338 հազար դրամ:

Ժամանակավոր պարապուրդի մեջ գտնվող հիմնական միջոցներ չկան:

Դեռևս օգտագործման մեջ գտնվող, սակայն լրիվ մաշված հիմնական միջոցների համախառն հաշվեկշռային արժեքը 31.12.2020թ-ին կազմում է 231,730 հազար դրամ (31.12.2019թ-ին՝ 218,643 հազար դրամ):

**7. Ոչ նյութական ակտիվներ**

<i>Մ000 դրամ</i>	<i>Մնացորդ 31.12.2020թ</i>	<i>Մնացորդ 31.12.2019թ</i>
Ընդամենը, այդ թվում՝	<u>153</u>	<u>171</u>
• հաշվապահական ծրագիր	-	18
• լիցենզիաներ	153	153

**8. Պաշարներ**

<i>Մ000 դրամ</i>	<i>Մնացորդ 31.12.2020թ</i>	<i>Մնացորդ 31.12.2019թ</i>
Ընդամենը, այդ թվում՝	<u>1,161,621</u>	<u>1,769,128</u>
• շինանյութ	405,075	1,016,937
• կառուցապատման նպատակով հողամաս	630,034	473,858
• վերելակներ	-	70,943
• ապրանքներ/տարածքներ/	13,660	13,679
• հումք նյութեր	159	5,013
• պահեստամաս	68,709	61,605
• վառելանյութ	7,201	13,955
• արտադրանք	12,380	40,501

2020թ. որպես ծախս ճանաչված նյութերի հաշվեկշռային արժեքը կազմել է 3,973,688 հազար դրամ (2019թ. -ին՝ 1,898,453 հազար դրամ):

**9. Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար**

<i>Մ000 դրամ</i>	<i>Մնացորդ 31.12.2020թ.</i>	<i>Մնացորդ 31.12.2019թ.</i>
Ընդամենը, այդ թվում՝	<u>127,195</u>	<u>52,464</u>

**«Էյ Դի Էյ Թեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն  
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

• նյութերի ձեռքբերման համար	75,712	49,629
• ծառայությունների ձեռքբերման համար	-	2,362
• ապրանքներ ձեռք բերելու դիմաց	51,483	473

**10. Առևտրական դեբիտորական պարտքեր**

*Միլիոն դրամ*

	<i>Մնացորդ 31.12.2020թ.</i>	<i>Մնացորդ 31.12.2019թ.</i>
<b>Ընդամենը, այդ թվում՝</b>	<b>1,507,346</b>	<b>2,098,610</b>
• կատարված աշխատանքներից	1,501,292	2,081,713
• արտադրանքի վաճառքից	43	1,966
• ապրանքների վաճառքից	3,172	8,700
• գործառնական վարձակալությունից	3,000	6,152
- արժեզրկման գծով պահուստ	(263)	-

**11. Դրամական միջոցներ**

	<i>Մնացորդ 31.12.2020թ.</i>				<i>Մնացորդ 31.12.2019թ.</i>			
	<i>ԱՄՆ</i>		<i>Պրամ</i>		<i>ԱՄՆ</i>		<i>Պրամ</i>	
	<i>Եվրո</i>	<i>Պրամ</i>	<i>Ռուբլի</i>	<i>Պրամ</i>	<i>Եվրո</i>	<i>Պրամ</i>	<i>Ռուբլի</i>	<i>Պրամ</i>
<b>Ընդամենը, այդ թվում՝</b>	<b>31</b>	<b>582,217</b>	<b>1,170</b>	<b>1,305,969</b>	<b>22,706</b>	<b>29,903</b>	<b>89,613</b>	<b>156,654</b>
• դրամարկղում	-	-	-	8	-	-	-	8
• բանկում՝ արժույթով	-	-	-	993,465	-	-	-	129,406
• բանկում՝ արտարժույթով	31	582,217	1,170	312,496	22,706	29,903	89,613	27,240

**12. Սեփական կապիտալ**

Սեփական կապիտալը (զուտ ակտիվները) ձևավորված է կանոնադրական կապիտալից (թողարկված և տեղաբաշխված (վճարված) կապիտալ), չբաշխված շահույթից (վնասից)՝ ներառյալ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթը:

**Կանոնադրական կապիտալ**

Կանոնադրական կապիտալը կազմվել է մասնակիցների ձեռք բերած հասարակ (սովորական) բաժնեմասերի անվանական արժեքից: Յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնեմաս տալիս է իր սեփականատեր հանդիսացող մասնակցին միևնույն իրավունքները:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 50,000 (հիսուն հազար դրամ) ՀՀ դրամ, որը կազմում է 10 հատ սովորական բաժնեմաս, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 5,000 դրամ: Կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են և վճարված: Հաշվետու տարում կանոնադրական կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել:

**Զբաղիված շահույթ**

Ընկերությունն իրավունք ունի տարեկան մեկ անգամ իրականացնել իր շահույթի բաշխում մասնակիցների միջև: Շահույթի բաշխման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից: Բաշխման ենթակա շահույթը բաշխվում է Ընկերության մասնակիցների միջև՝ ըստ Ընկերության կանոնադրական կապիտալում նրանց բաժնեմասերի չափերի:

**Պահուստային կապիտալ**

Ընկերությունում ստեղծվում է պահուստային կապիտալ՝ ոչ պակաս կանոնադրական կապիտալի 15 տոկոսից: Եթե պահուստային կապիտալը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ կապիտալին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային կապիտալն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային կապիտալը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար: Ընկերությունը, կանոնադրությամբ սահմանված կարգով, ստեղծել է պահուստային կապիտալ, որը կազմում է 7,500 դրամ: Հաշվետու տարում պահուստային կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել:

**13. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր**

*Օ00 դրամ*

	<i>Մնացորդ 31.12.2020թ.</i>	<i>Մնացորդ 31.12.2019թ.</i>
<b>Ընդամենը, այդ թվում՝</b>	<b>10,843</b>	<b>8,877</b>
• նյութերի ձեռքբերումից	151	359
• ծառայությունների ձեռքբերումից	9,823	8,433
• հիմնական միջոցների ձեռքբերումից	338	50
• գործառնական վարձակալությունից	530	35

Առևտրական կրեդիտորական պարտքերը տոկոսային չեն և, որպես կանոն, մարվում են 30 օրվա ընթացքում:

**14. Կանխավճարներ աշխատանքների, ապրանքների համար**

*Օ00 դրամ*

	<i>Մնացորդ 31.12.2020թ.</i>	<i>Մնացորդ 31.12.2019թ.</i>
<b>Ընդամենը, այդ թվում՝</b>	<b>2,149,186</b>	<b>4,177,927</b>
• շինարարական աշխատանքների գծով	2,149,186	4,177,927

Շինարարական աշխատանքների գծով ստացված կանխավճարները հիմնականում ստացվել են «ԵՂՀ շրջանավարտների միավորում» ՀԿ-ից:

**15. Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ**

*Օ00 դրամ*

	<i>Մնացորդ 31.12.2020թ.</i>		<i>Մնացորդ 31.12.2019թ.</i>	
	<i>կանխավճար</i>	<i>պարտա- վորություն</i>	<i>կանխավճար</i>	<i>պարտա- վորություն</i>
<b>Ընդամենը, այդ թվում՝</b>	<b>-</b>	<b>6,178</b>	<b>489,403</b>	<b>18,331</b>
• ԱԱՀ	-	-	489,403	-
• եկամտային հարկ	-	-	-	9,827
• պարտադիր սոց.ապահով.	-	-	-	145
• ոչ ռեզիդենտի շահութահարկ	-	-	-	7,133



16. Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություններ

Միլիոն դրամ

	<i>Մնացորդ 31.12.2020թ</i>	<i>Մնացորդ 31.12.2019թ</i>
Ընդամենը, այդ թվում՝	105,289	105,289
• կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով	105,289	105,289

17. Վաճառքներ

Հասույթի ուղղություններ

Ընկերությունը հասույթը ստացել է գնորդների հետ պայմանագրերից: Դրանք հիմնականում առաջացել են շինարարական աշխատանքների կատարումից:

Միլիոն դրամ

	<i>2020թ.</i>			<i>2019թ.</i>		
	<i>Հասույթ</i>	<i>Բնքնարժեք</i>	<i>Շահույթ</i>	<i>Հասույթ</i>	<i>Բնքնարժեք</i>	<i>Շահույթ</i>
Ընդամենը, այդ թվում՝	9,272,845	(6,891,572)	2,381,273	4,116,284	(3,664,252)	452,032
• աշխատանքների կատարումից	9,242,519	(6,872,524)	2,369,995	3,998,333	(3,543,466)	454,867
• ապրանքների և արտադրանքի վաճառքից	30,326	(19,048)	11,278	117,951	(120,786)	(2,835)

Հասույթի մանրամասնեցում

<i>Ապրանքի (ծառայության) տեսակ</i>	<i>Տարածաշրջան</i>	<i>Գնորդի տեսակ</i>	<i>Պայմանագրի տեսակ</i>	<i>Պայմանագրի տևողություն</i>	<i>Ապրանքի (ծառայության) փոխանցման ժամկետ</i>	<i>Հասույթ</i>
Շին. աշխատանքների կատարումից	ՀՀ	ոչ պետական	հաստատուն գնով կնքված պայմանագիր	երկարաժամկետ պայմանագիր	ժամանակի ընթացքում պատվիրատուին հանձնված աշխատանքներ	9,816,133
Վաճառված արտադրանքից	ՀՀ	ոչ պետական	հաստատուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի որոշակի պահին գնորդին փոխանցված արտադրանք	30,326

Պայմանագրի գծով մնացորդներ

Միլիոն դրամ

	<i>2020</i>	<i>2019</i>
• պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	1,217	17,545
• պայմանագրի գծով ակտիվներ	1,506,129	2,081,065
• պայմանագրի գծով պարտավորություններ	-	-

Գատարման պարտականություններ, հասույթի ճանաչման քաղաքականություն

<i>Անվանումը</i>	<i>Գատարման պարտականության բնույթը և վճարման ժամկետը</i>	<i>Հասույթի ճանաչման քաղաքականությունը</i>
Էլ.էներգիայի վաճառք	Ընկերությունը կատարում է բազմաբնակարան շինարարական աշխատանքներ: Վճարման ժամկետը սահմանվում է պայմանագրերով:	Գնորդը ստանում է շինարարական աշխատանքների արդյունքը կատարման գույքը և ընկերությունը աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը փոխանցում է ժամանակի ընթացքում: Յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ կատարվում է կատարված պարտականությունների կատարման արդյունքի որոշակիացում, չափում, ներկայացում, ընդունում և հասույթի ճանաչում:

**18. Այլ եկամուտներ (ծախսեր)**

<i>Մ000 դրամ</i>	<i>2020</i>	<i>2019</i>
Այլ եկամուտներ (օգուտներ) ընդամենը, այդ թվում՝	<u>67,903</u>	<u>63,009</u>
• գործառնական վարձակալությունից	37,500	60,427
• հիմնական միջոցների վաճառքից	28,455	-
• կրեդիտորական պարքտի դուրսգրումից	319	1,798
• վնասի փոխհատուցումից	1,324	263

<i>Մ000 դրամ</i>	<i>2020</i>	<i>2019</i>
Այլ ծախսեր (վնասներ) ընդամենը, այդ թվում՝	<u>(35,727)</u>	<u>(31,467)</u>
• դեբիտորական պարտքերի դուրս գրումից	(1,044)	(79)
• տույժերից, տուգանքներից	(7,539)	(200)
• արտարժույթի փոխարկումից	(4,477)	(8,442)
• վարձակալության տրված հիմնական միջոցների մաշվածություն	(9,927)	-
• հիմնական միջոցների վաճառքից	(3,630)	-
• անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	(9,110)	(8,436)
• ստուգմամբ հայտնաբերված նախորդ տարիների շահութահարկի գումար	-	(14,310)

**19. Ֆինանսական եկամուտներ (ծախսեր)**

<i>Մ000 դրամ</i>	<i>2020</i>	<i>2019</i>
Ֆինանսական եկամուտներ ընդամենը, այդ թվում՝	<u>17,578</u>	<u>9,315</u>
• ներդրված ավանդի գծով	17,578	9,315

Ֆինանսական եկամուտը Ընկերության հաշվարկային հաշվում ավանդագրված գումարների գծով ստացված տոկոսային եկամուտն է:

<i>Միլիոն դրամ</i>	<i>Տոկոսա- դրույք</i>	<i>Մարման ժամկետ</i>	<i>Մնացորդ 31.12.2020թ.</i>	<i>Մնացորդ 31.12.2019թ.</i>
Ընդամենը ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝			65,000	65,000
- ՀՀ դրամով ավանդ	8,25%	17/07/2020	-	15,000
- ՀՀ դրամով ավանդ	8,5%	25/06/2021	-	50,000
- ՀՀ դրամով ավանդ	9%	17/07/2021	15,000	-
- ՀՀ դրամով ավանդ	8,5%	25/06/2021	50,000	-
<i>Միլիոն դրամ</i>			<i>2020</i>	<i>2019</i>
Ֆինանսական ծախսեր ընդամենը, այդ թվում՝			-	(8,714)
• վարկային գիծ			-	(8,714)

**20. Շահութահարկ**

Շահութահարկի դրույքաչափը 2020թ. 18% է (2019թ.-ին՝ 20%):

<i>Միլիոն դրամ</i>	<i>2020</i>	<i>2019</i>
• շահույթ (վնասում) ճանաչված շահութահարկի գումար, այդ թվում՝	<b>(405,608)</b>	<b>(67,583)</b>
o ընթացիկ հարկի գծով	(393,030)	(88,128)
o հետաձգված հարկի գծով	(12,578)	20,545
• ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված շահութահարկի գումար	-	-

*Հարկի գործող միջին դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում*

<i>Միլիոն դրամ</i>	<i>2020</i>	<i>2019</i>
<i>Հարկի գործող միջին դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում</i>		
Հարկի կիրառվող դրույք	18%	20%
Շահույթը մինչև հարկումը	2,212,527	324,551
Չնվազեցվող ծախսեր/չհարկվող եկամուտներ	29,027	116,089
Հարկվող շահույթը	2,183,500	440,640
Ընթացիկ հարկ	393,030	88,128
Հարկի գործող միջին դրույքը	17,8%	27,2%

Ընթացիկ հարկի գծով սեփական կապիտալին դեբետագրված կամ կրեդիտագրված հոդվածներ չկան: Չկան հարկի գծով ծախս (փոխհատուցում), որը վերաբերում է հաշվետու տարում ճանաչված արտասովոր հոդվածներին:

*Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ*

<i>Միլիոն դրամ</i>	<i>Օստոք.</i>	<i>(+) Հարկվող ժամանակվոր տարբերություն</i>
		<i>(-) Նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություն</i>

	2020	2019
Անավարտ արտադրանք	(1,191,640)	(1,881,715)
Առևտրական դեբիտորական պարտքեր	1,506,866	2,081,065
Աշխատավարձի և այլ կարճ.հատուցումների գծով պարտավորություններ	(150,289)	(105,289)
Ընդամենը	163,937	94,061
Հարկի դրույքը	18%	18%
Հետաձգված հարկային պարտավորություններ	29,509	16,931

«Անավարտ արտադրանք» հոդվածում նվազեցվող, իսկ «Առևտրական դեբիտորական պարտքեր» հոդվածում հարկվող ժամանակավոր տարբերությունները առաջացել են ֆինանսական նպատակով ըստ ավարտվածության աստիճանի եկամտի (դեբիտորական պարտքի) ու հարկային հաշվառման նպատակով կատարված աշխատանքները անավարտ արտադրանքի ճանաչումից, ինչպես նաև արժեզրկման կորուստից:

«Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություն» հոդվածում ժամանակավոր տարբերությունը առաջացել է աշխատակիցների կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով:

Չկան որևէ նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություններ, չօգտագործված հարկային վնասներ և չօգտագործված հարկային զեղչեր, որոնց համար ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չի ճանաչվել որևէ հետաձգված հարկային ակտիվ:

**21. Շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ ծախսերի ըստ բնույթի դասակարգմամբ**

<i>ՊՈՍՏ</i>	<i>Ծանոթ.</i>	<i>2020</i>	<i>2019</i>
<i>ՊՈՍՏ 17</i>			
Հասույթ	17	9,272,845	4,116,284
Այլ եկամուտներ	18	67,903	63,009
Օգտագործված հումք և նյութեր	8	(3,973,688)	(1,898,453)
Աշխատավարձ և կարճ. այլ հատուցումներ		(2,038,758)	(1,410,273)
ՀՄ-ների մաշվածություն	6	(338,911)	(209,573)
ՈՆԱ-ների ամորտիզացիա	7	(178)	(184)
Դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստներ	10	(263)	-
Գործառնական այլ ծախսեր		(793,626)	(338,600)
<b>Գործառնական շահույթ</b>		<b>2,195,324</b>	<b>322,210</b>
Ֆինանսական եկամուտներ	19	17,578	9,315
Ֆինանսական ծախսեր	19	-	(8,714)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		(375)	1,740
<b>Շահույթ մինչև հարկումը</b>		<b>2,212,527</b>	<b>324,551</b>
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	20	(405,608)	(67,583)
<b>Չուտ շահույթ</b>		<b>1,806,919</b>	<b>256,968</b>

**22. Իրական արժեք. ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակներն ու քաղաքականությունը**

*Իրական արժեք*

Հիմնական ֆինանսական ակտիվներն են առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները, իսկ ֆինանսական պարտավորությունները՝ վարկերը, վարձակալության գծով պարտավորությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով և դրանց գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են հաշվեկշռային արժեքներին:

*Ֆինանսական ռիսկերի կառավարման հիմունքներ*

Ընկերությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերի: Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման համար և վերահսկում է այդ ռիսկերի կառավարման գործընթացը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկողության մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ընկերությունը չի հեջավորում իր ենթարկվածությունը այդ ռիսկերին:

*Պարտքային ռիսկ*

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի մի կողմը իր պարտականությունների չկատարմամբ մյուս կողմի համար կառաջացնի ֆինանսական կորուստ: Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկին՝ կապված գործառնական գործունեության (հիմնականում առևտրային դեբիտորական պարտքեր) և ներդրումային գործունեության (ավանդներ, տրված փոխառություններ) հետ:

Վաճառքների գծով պարտքային ռիսկի կառավարումն իրականացվում է հաշվապահության կողմից: Հիմնական պատվիրատուն «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ՀԿ-ն է: Դեբիտորական պարտքի մարումը իրականացվում է կանոնավոր՝ հաջորդ ամսվա ընթացքում: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է բոլոր գնորդների համար արժեզրկման (անհավաքագրելիության) ստուգում՝ անհատական հիմունքով: Հաշվարկները սահմանվում են անցյալում փաստացի կրած վնասների հիման վրա: Պարտքերի համար ապահովություն (գրավ) չի պահանջվում: Գնորդը չունի արտաքին պարտքային վարկանիշ:

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Առևտրային դեբիտորական պարտքերի ռիսկի համակենտրոնացումը գնահատվում է ցածր:

*Իրացվելիության ռիսկ*

Այն բանի ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Ընկերությունը իրականացնում է դրամական միջոցների դեֆիցիտի ռիսկի նկատմամբ վերահսկողություն՝ օգտագործելով շարունակական իրացվելիությունը պլանավորելու գործիքը:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների մարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ հիմնված չզեղված պայմանագրային վճարումների վրա, ինչպես նաև հաշվեկշռային արժեքները:

000 դրամ

31.12.2020թ.

	Պայմանագրային վճարումներ			Հաշվեկշռային արժեք
	Ցպահ անջ	մինչև 1 տարի	1-ից 5 տարի	
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր		10,843	-	10,843
Այլ պարտավորություններ		157,645	-	157,645

ՄՈՍ դրամ

31.12.2019թ.

	Պայմանագրային վճարումներ				Հաշվեկշռային արժեք
	Ցպահանջ	մինչև 1 տարի	1-ից 5 տարի	Ընդամենը	
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	8,877	-	8,877	8,877
Այլ պարտավորություններ	-	123,620	-	123,620	123,620

**Շուկայական ռիսկ**

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է երեք տեսակի ռիսկ՝ արժույթային ռիսկ, տոկոսադրույքային ռիսկ և այլ գնային ռիսկ: Շուկայական ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, գնումների գծով կրեդիտորական պարտքերը, ֆինանսական երաշխավորության պայմանագրերը, վաճառքների գծով դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները:

**Արժույթային ռիսկ**

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի փոխարժեքների փոփոխության ռիսկին ենթարկվում է արտարժույթով վարկերը և փոխառությունները: Արժույթները, որոնք հիմնականում առաջացնում են նման ռիսկեր՝ Եվրո, ԱՄՆ դոլար և Ռուսական ռուբլին:

Ընկերությունը ունի արտարժույթով գնանշված հետևյալ ֆինանսական գործիքները.

Հոդված	USD		EUR		RUB	
	2020	2019	2020	2019	2020	2019
Ընթացիկ ակտիվներ						
Դրամական միջոցներ	582,217	29,903	31	22,706	1,170	89,613
Ընթացիկ պարտավորություններ	-	-	-	-	-	-
<b>Չուտ հաշվեկշիռ</b>	<b>582,217</b>	<b>29,903</b>	<b>31</b>	<b>22,706</b>	<b>1,170</b>	<b>89,613</b>

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժույթային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը՝

	ՀՀ դրամ	31.12.2020	31.12.2019
1 ԱՄՆ դոլար		522.59	479.70
1 Եվրո		641.11	537.26
1 Ռուբլի		7.02	7.77

Ընկերության քաղաքականության համաձայն՝ տարեվերջին արտարժույթով ֆինանսական պարտավորությունների և ակտիվների տարբերության զուտ մնացորդը չպետք է գերազանցի տարվա հասույթի 20%-ը:

Աղյուսակում ներկայացված է ԱՄՆ դոլարի, Եվրոյի փոխարժեքի հնարավոր փոփոխության նկատմամբ զգայունությունը՝ այլ փոփոխականների հաստատուն լինելու դեպքում: Խմբի նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը պայմանավորված է դրամական ակտիվների և պարտավորությունների իրական

արժեքների փոփոխություններով: Այլ արժույթների փոփոխությունների նկատմամբ Խմբի ենթարկվածությունը էական չէ:

	Արտարժույթ	Փոխարժեքի փոփոխություն	Նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը ('000 դրամ)
2020թ.	ԱՄՆ դոլար	+5%/-5%	15,213/(15,213)
2019թ.	ԱՄՆ դոլար	+5%/-5%	717/(717)
2020թ.	Եվրո	+6%/-6%	1(1)
2019թ.	Եվրո	+6%/-6%	732/(732)

Տոկոսադրույքային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Տոկոսադրույքի փոփոխությունները գլխավորապես ազդում են վարկերի վրա՝ փոփոխելով նրանց իրական արժեքը: Ստացված վարկերը ֆիքսված տոկոսադրույքով են: Ղեկավարությունը չունի ձևակերպված քաղաքականություն ֆիքսված կամ փոփոխական տոկոսադրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը: Նոր տոկոսակիր ֆինանսական պարտավորությունների ներգրավման դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա, որոշելու, թե որ տիպի տոկոսադրույքը ավելի բարենպաստ կլինի Ընկերության համար մինչև ակնկալվող մարման ժամկետի ընթացքում:

Ընկերությունը ունի ֆիքսված տոկոսադրույքով տոկոսակիր ֆինանսական գործիքների հետևյալ կառուցվածքը.

'000 դրամ	Հաշվեկշռային արժեք	
	31.12.2020թ.	31.12.2019թ.
Ֆինանսական ակտիվներ	65,000	65,000
Ֆինանսական պարտավորություններ	-	-
<b>Չուտ հաշվեկշիռ</b>	<b>65,000</b>	<b>65,000</b>

Այլ գնային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժույթային ռիսկից առաջացողներից) արդյունքում, անկախ այն բանից, թե այդ փոփոխությունները պայմանավորված են առանձին ֆինանսական գործիքին կամ դրա թողարկողին հասույթ գործոններով, թե շուկայում շրջանավոր բոլոր նմանատիպ ֆինանսական գործիքների վրա ազդող գործոններով:

Այլ գնային ռիսկերի ազդեցությունը էական չէ:

**23. Կապիտալի կառավարում**

Կապիտալի կառավարման հիմնական նպատակն է սեփական կապիտալի վարկունակության կայունության և ֆինանսական ցուցանիշների համապատասխան մակարդակի պահպանումն է՝ Ընկերության գործունեության աջակցության և մասնակիցների շահույթը մաքսիմալացնելու նպատակով:

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն: Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների փոփոխություններին համապատասխան:

Պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն

'000 դրամ	2020	2019

Ընդամենը պարտավորություններ	2,347,182	4,327,356
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,305,969	156,654
Ընդամենը զուտ պարտք	1,041,213	4,170,702
Ընդամենը սեփական կապիտալ	4,985,619	3,178,700
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն	0,21	1,31

**24. Կապակցված կողմերի բացահայտումներ**

Առանցքային կառավարչական անձնակազմին հատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմին կարճաժամկետ հատուցումները (աշխատավարձ) 2020թ. կազմել է 57,766 հազար դրամ և 2019թ.՝ 53,333 հազար դրամ: Առանցքային կառավարչական անձնակազմին այլ հատուցումներ չեն եղել:

**25. Պայմանականություններ**

Բիզնես միջավայր

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է քաղաքական և տնտեսական փոփոխությունների փուլում: Չկան բիզնեսի և վերահսկողական այնպիսի զարգացած ենթակառուցվածքներ, ինչպիսիք կան ավելի հասուն շուկայական տնտեսություններում: Ավելին, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների գործունեությունը և վերջիններս ոչ միշտ են ճիշտ արտացոլում ֆինանսական գործիքների արժեքը: Հետագա տնտեսական աճի հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է և տարածաշրջանային անկայունությունը: Աղքատության մակարդակը շարունակում է բարձր մնալ, ինչն ազդում է համընդհանուր գնողունակության և պահանջարկի վրա: Ֆինանսական աշխարհի վերականգնումը արտացոլում է Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա բիզնես միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատումը: Բիզնես միջավայրի ապագա փոփոխությունները կարող են տարբերվել Ղեկավարության գնահատումներից:

Ապահովագրություն

ՀՀ-ում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում: Ներմուծվում են զարգացած երկրներում վաղուց կիրառելի ապահովագրական գործիքներ: Հաշվետու տարվա վերջի դրությամբ Ընկերությունը իրականացրել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ): Քանի դեռ չի իրականացված ակտիվների ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

Դատական հայցեր

2020թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր չկան:

Հարկերի հաշվառման անորոշություններ և պայմանականություններ

ՀՀ հարկային համակարգը, հարկային հարաբերությունները կարգավորվում է հիմնականում ՀՀ հարկային օրենսգրքով: Օրենսդրությունում փոփոխությունները, պաշտոնական պարզաբանումները կամ իրազեկումները, դատական մարմինների որոշումները, օրենսդրության տարբերեցումները, տարաբնույթ մեկնաբանությունները առաջացնում են հարկային պարտավորությունների գնահատման անորոշություններ: Ներկայացված և վճարված հարկային պարտավորությունների ճշտությունը ենթակա է ստուգման հարկային մարմինների կողմից, որոնք խախտումների համար իրավասու են առաջադրել տույժեր, տուգանքներ: Հարկային պարտավորությունները չեն կարող փոփոխվել, եթե դրանք վերաբերում են երեք տարուց ավել վաղեմությանը:



Ղեկավարությունը որոշում է, թե արդյոք հարկավոր է դիտարկել յուրաքանչյուր հարկային անորոշությունն առանձին կամ մեկ կամ մեկ հարկային անորոշությունների հետ միասին՝ կախված նրանից, թե որ մոտեցումն է թույլ տալիս լավագույնս կանխատեսել անորոշության լուծումը: Ղեկավարությունը ենթադրում է, որ հարկային մարմինը կստուգի այն գումարները, որոնք նա իրավունք ունի ստուգելու և այդ ստուգումները կատարելիս՝ կունենա համապատասխան տեղեկություններին վերաբերող ամբողջական տեղեկատվություն:

Ղեկավարությունը գտնում է, որ ճիշտ է ճանաչել հարկային պարտավորությունները: Այնուամենայնիվ, հարկային մարմինը կարող է ունենալ Ընկերության կողմից հաշվարկված և ներկայացված հարկային պարտավորությունների վերաբերյալ այլ մեկնաբանություններ, որոնք կարող են ի հայտ գալ ստուգումների, ուսումնասիրությունների ընթացքում:

## 26. ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի առաջին անգամ որդեգրումը

Կազմակերպության՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով առաջին ֆինանսական հաշվետվությունները տարեկան այն առաջին ֆինանսական հաշվետվություններն են, որոնցում կազմակերպությունը որդեգրում է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն՝ այդ հաշվետվություններում կատարելով ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխանության վերաբերյալ բացահայտ և անվերապահ հայտարարություն:

Սույն ֆինանսական հաշվետվությունները Ընկերության՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով առաջին ֆինանսական հաշվետվություններն են: Ընկերությունը դրանց նկատմամբ կիրառել է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի բաժին 35-ը՝ «Անցումը ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին»:

Ընկերությունը ներկայացրել է իր նախորդող ամենավերջին ֆինանսական հաշվետվությունները ամբողջական ՖՀՄՍ-ների համաձայն:

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին անցնելու ամսաթիվը, այսինքն ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն Ընկերության վարվող հաշվապահական հաշվառման սկզբնակետը, 2019թ. հունվարի 1-ն է:

Ընկերությունը կիրառել է հաշվապահական հաշվառման միևնույն քաղաքականությունը իր ֆինանսական վիճակի մասին՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով սկզբնական հաշվետվության մեջ և ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով իր առաջին ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում: Հաշվապահական հաշվառման այդ քաղաքականությունը, որի վերաբերյալ էական տեղեկատվությունը բացահայտվել է 4-րդ ծանոթագրությունում, համապատասխանում է 31.12.2020թ. դրությամբ գործող ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին:

Ամբողջական ՖՀՄՍ-ներից ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին անցումը չի ազդել Ընկերության նախորդող ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների վրա, այդ թվում ներկայացված ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վրա:

## 27. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից (31.12.2020թ) հետո մինչև վավերացման ամսաթիվը (03.06.2021թ.) ընկած ժամանակահատվածում:

## 28. Ֆինանսական հաշվետվությունների վավերացում

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են հրապարակման համար 2021թ. հունիսի 3-ին՝ տնօրեն Ռաֆիկ Ղազարյանի և գլխավոր հաշվապահ Արման Մարտիրոսյանի կողմից:

Տնօրեն

Ռաֆիկ Ղազարյան

Գլխավոր հաշվապահ

Արման Մարտիրոսյան